եւ ո՛չ զաւետիս Յարութեան[1] ընկալեալ ուրուք[2] յումեքէ զայս ամենայն ի հինգշաբաթոջն[3] ո՛չ գտանեմք այսպէս[4] եղեալ, այլ ասեմք ի Տեառնէ պատմիչ լինելով դեռ զկնի այնր[5] ամենայնի[6], եւ ի[7] հին Զատկին զփրկագործ խորհուրդն կատարեմք, եւ մեք Քրիստոսի մարմնովն սպասաւորեալք յաւրինակ Տեառն մերոյ[8] Փրկչին իւրով աշակերտաւքն՝[9] որպէս[10] եւ այժմ վերադիտողին միայն հրամայեմք[11] քահանայիւք հաղորդել[12] ահաւոր[13] խորհրդոյն եւ զգոեհիկսն[14] արտաքս ելանել:

Նաեւ ո՛չ զոք ի դպրաց[15] կամ ի մանկանց ուսումնասիրաց հրամայեմք կալ յեկեղեցւոջ[16] սակս վկայութիւն տալոյ[17], զի զատեալ որոշեսցուք ամենայն կարգաւք յերկաբնակ աղանդոյն Քաղկեդոնի: Քանզի նոքա անխտրապէս եւ անխոստովանաբար, ո՛չ լեալ մաքուր՝ մերձենան յահաւոր խորհուրդն, իբրեւ ոչինչ համարելով[18], համարձակութիւն ետուն եւ մերոյ վիճակիս, յոր[19] սոսկալի եւ ահաւոր է մատչել երախայից[20], զի այսպէսն[21] ո՛չ է բաժակ[22] անմահութեան, այլ բաժակ այրման: Իսկ մեք[23] նախ[24] քան զսոսկալի խորհուրդն, երախայիցն[25] պարգեւս շնորհեմք[26] եւ զազատութիւն խոստանամք, մուծանեմք[27] ընդ դուռն արքունական[28] պողոտային եւ հրաւիրեմք յառագաստն[29] լուսոյ, ասելով. «Այս դուռն Տեառն է, եւ արդարք մտանեն ընդ սա[30]»: Եւ յայնմ աւուր խորհրդոյ[31] մարմնոյ եւ[32] արեան Տեառն սքողեալ պատրուակեմք[33] զնոսա, եւ զերախայս[34] զգուշացուցանեմք՝ հրաժարելով ի նոցանէ, եւ ի խոստովանութիւն ուղղութեանց մերոց վերաբերիլ[35] վարժեմք[36], եւ զերախայս[37] եւ զպասքեալ սիրտս նոցա զովացուցեալ[38] սփոփեմք: Եւ նուիրեալ հրաւիրեմք զնոսա յուրախութեանն աւր[39] աւետեաց եւ յազատութիւն[40] կենացն անվախճանից[41], որ է նոր արքայութեան սկիզբն, եւ տեսչութիւն էական փառացն եւ նկարագիր լուսոյն յաւիտենից, յորում ազատեալքն փրկա-

---

1 aii$_1$ *Յարութեանն* փխ *Յարութեան* (em)

2 i չիք *ուրուք*

3 e *Ե-շաբաթոջն* փխ *հինգշաբաթոջն* (aii$_1$m)

4 e չիք *այսպէս* (aii$_1$m)

5 e չիք *այնր* (aii$_1$m)

6 Ըստ Հ. Ն. Պողարեանի՝ վերականգնելի է *ամենայնիւ*:

7 m չիք *ի* (aeii$_1$)

8 m *մերո*

9 e *աշակերտովքն*, m *աշակերտաւք շնորհովքն* փխ *աշակերտաւքն* (aii$_1$) (i$_1$-ի գրիչը եւս սկզբում գրել է *աշակերտովքն*, սակայն յետոյ *ով* հատուածի վրայ ուղղման կայծակնաձեւ նշան է դրել եւ լուսանցքում նշել՝ *օքն*):

10 e չիք *որպէս* (aii$_1$m)

11 m *հրամաեմք*

12 m *հաղորդեալ*

13 e *յահաւոր* փխ *ահաւոր* (aii$_1$m)

14 e *զգոեհիկս*, m *զգոեհիկան* փխ *զգոեհիկսն* (aii$_1$)

15 e *ի դպրաց զոք եւ* փխ *զոք...դպրաց* (aii$_1$m)

16 i$_1$m *յեկեղեցոջ*

17 i$_1$ *տալո* / e *վկայութեան տալով* փխ *վկայութիւն տալոյ* (aii$_1$m)

18 e *համարեալ* փխ *համարելով* (aii$_1$m)

19 ii$_1$m *յորս* փխ *յոր* (ae) (տե՛ս *յորս սոսկալի*)

20 i *յերախայից*

21 e *այսպէս* փխ *այսպէսն* (aii$_1$m)

22 e չիք *է բաժակ* (aii$_1$m)

23 e չիք *մեք* (aii$_1$m)

24 i չիք *նախ*

25 e *խորհրդոյ* փխ *խորհուրդն, երախայիցն* (aii$_1$m)

26 ii$_1$m չիք *շնորհեմք* (ae) (սակայն i$_1$-ի գրիչը լուսանցքում աւելացրել է (առանց նշանի) *շնորհ*):

27 e չիք *մուծանեմք* (aii$_1$m)

28 e *արքայական* փխ *արքունական* (aii$_1$m)

29 m *յաղագս* փխ *յառագաստն* (aeii$_1$)

30 i *սայ* / e չիք *ասելով. Այս...սա* (aii$_1$m)

31 m *խորհրդո*

32 a չիք *եւ* (eii$_1$m)

33 m *պատրուակիմք* փխ *պատրուակեմք* (aeii$_1$)

34 ii$_1$m *զերեխայս*

35 m *վեր բերել* փխ *վերաբերիլ*

36 eii$_1$m *վարժիմք* փխ *վարժեմք* (a)

37 im *զերեխայս*

38 e *զովացուցանել* փխ *զովացուցեալ* (aii$_1$m)

39 e *յուրախութիւն* փխ *յուրախութեանն աւր* (aii$_1$m)

40 aeii$_1$m *զազատութիւն* փխ *յազատութիւն* (վերականգնում)

41 i *անվախջանիցն*, i$_1$m *անվաղճանիցն* փխ *անվախճանից* (a) / e չիք *եւ յազատութիւն...անվախճանից* (aii$_1$m)